ՀՐԱԺԵՇՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՍԵԼԻ Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՆԸ

Վեհափառ Հայրապետը լավագույն տպավորությամբ և խորապես մխիթարված Բոմոն Իր այցելությունից՝ վերադարձավ Մարսել, ուր երեկոյան ժամը 21-ին Պրադոյի Մայր եկեղեցու Տիկնանց օժանդակ մարմինը կազմակերպել էր հրաժեշտի ընդունելություն:

Հանուն Տիկնանց օժանդակ մարմնի, Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթեց պրն. Զարմայր Ալեքսանյանը հետևյալ ուղերձով.

«Վեհափառ Տեր,

Մարսիլահայությունը ընդհանրապես և Մայր եկեղեցվույս կրոնական ընկերակցությունն ու իր վարչությունը ցնծության և ուրախության մեջ են ութ օրերե ի վեր: Հայտնի է բոլորիս, որ ուրախություններն ալ վերջ մը ունին, և ահա կմոտենանք այդ հուզիչ պահին, քանի որ քիչ հետո ստիպված պիտի բաժնվինք մեր սիրելի Հայրիկեն: Կմխիթարե մեզ սակայն այն խոստումը, որ ըրավ Վեհափառը երեկ մեր մանկանց, որ երեք տարի հետո կրկին պիտի գա:

Մենք որդիական ակնածանքով շնորհակալություն կհայտնենք մեր մեծ Հայրապետին, որ հայրական այցելությամբ պատվեց Իր հավատացյալ զավակները: Մենք մեր ուրախության ու շնորհակալության խոսքն ունինք նաև մեր հարգելի նահանգապետին ու քաղաքապետին, որոնք հանուն մեր երկրորդ հայրենիքին՝ ասպետական Ֆրանսայի, արժանավայել ընդունելություններ կազմակերպեցին մեր սիրելի Հայրապետին:

Վեհափառ Տեր, ցարդ խոսողները Ձեզ տեղյակ պահեցին քաղաքիս ազգային ու եկեղեցական հարցերու մասին: Մեր այսօրվան հրաժեշտի այս սեղանը սարքված է մեր տան մեջ, Ձեր տան մեջ՝ հոգածությանը ներքև մեր կանանց օժանդակ մարմնին: Անոնք մեզի հետ միշտ պատրաստ են ժրաջա-

նորեն աշխատանքի իրենց բաժինը բերելու եկեղեցվույս ծառայության՝ բոլորված իրենց ազնիվ նախագահուհի տկն. Սողոմոնյանի ու նույնքան և ավելի հոգնիլ չգիտցող տկն. Զրբաշյանի շուրջ:

Վեհափառ Տեր, ինչպես ստուգեցիք, մեր այս մշակույթի կեդրոնի սրահները մկրտած է վարչությունս երեք գլխավոր բարերարներու անուններով: Այս սրահը կկոչվի «Արծրուն Զրբաշյան», երկրորդը՝ «Վարուժան Պոզաճյան սրահ» և վարչությանս ժողովասրահը՝ ավետարանական համայնքի զավակ «Օննիկ Հայկազյան սրահ»: Այս վերջինը ծանոթ անուն մըն է Վեհափառությանդ, քանի որ ան էր, որ իր պրպտումներով կրցավ գլուխ հանել շատ մեծ գործ մը, գտնելով 309 տարի առաջ վախճանած մեր անվանի կղերականներեն Ոսկան վարդապետի գերեզմանը, անոր անվան վերաբերող արձանագրությունը՝ նվիրված պարոն քաղաքապետին կողմե Ձերդ Վեհափառության և Ձեր կողմե ալ՝ եկեղեցվույս: Ան կգրավե իր պատվավոր տեղը մեր տաճարին մեջ:

Մենք ուրախ ենք լսելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի ներկա փայլուն վիճակի մասին: Ան կապրի ներկայիս իր ոսկեդարը շնորհիվ մեր շինարար կաթողիկոս Հոր ջանքերուն, ինչպես նաև մեր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի ղեկավարության բարյացակամության ու օժանդակության: Առանց մայր հայրենիքի հայ անունն ու եկեղեցին նման ոսկեդար մը պիտի չկրնային ունենալ:

Դուք, Վեհափառ Տեր, հայոց ամենասիրելի կաթողիկոսն եք: Մենք կաղոթենք Աստուծո, որ Վեհափառությանդ երկար կյանք պարգևե, որպեսզի միշտ շեն ու պայծառ մնա մեր պաշտամունքի բերդ ս. Էջմիածինը:

Երրորդ անգամ ըլլալով ընդունեցինք մեր Հայրապետը: Տա աստված, որ այդ պատվին արժանանանք չորրորդ անգամ: Ձեր շարունակելիք ճամփան արդյունավետ դառնա:

Բարով եկաք, սիրելի Վեհափառ, և բարով ալ դառնաք Ձեր պալատը՝ ս. Էջմիածին»:

Հրաժեշտի ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը Իր օրհնությանը և գնահատությանն արժանացրեց Սեն-Ժերոմի ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցու վարչության ատենապետ պրն. Նուպար Մինասյանի և Պրադոյի հայոց եկեղեցու ատենապետ պրն. Զարմայր Ալեքսանյանի եկեղեցանվեր և ազգօգուտ ծառայությունները՝ նրանց կուրծքը զարդարելով «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով՝ միջնորդությամբ տ. Սերովբե արքեպիսկոպոսի:

Հրաժեշտի սույն ընդունելության ընթացքում Պրադոյի եկեղեցական վարչությունը Հայոց Հայրապետին նվիրեց աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու յուղաներկ մի ծովանկարի բնագիր օրինակը:

Ընդհանուր խանդավառության մեջ խոսք առավ Վեհափառ Հայրապետը՝ Իր հրաժեշտի խոսքն ասելու բոլոր ներկաներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԸ ՄԱՐՍԵԼՈՒՄ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ
(10 մայիսի 1979 թ.)

Ժամը հնչեց հրաժեշտի: Իրոք շատ արագ անցան այս յոթը օրերը: Մեզի այնպես կթվի, թե երեկ եկանք: Երևի իրապես հաճելի անցավ այս ամենը, և Մենք պիտի հեռանանք ձեզմե անմոռանալի հիշատակներով:

Այս անգամ Մարսիլիան և Մարսիլիո մեր ժողովուրդը ավելի մոտիկեն ճանչցանք, սիրեցինք ձեզ և այժմ Մեզ ավելի հարազատ կզգանք ձեր միջավայրին: Եթե կաթողիկոս չըլլայինք, այստեղ կմնայինք: Բայց այն ալ ըսենք, որ քսանչորս տարի առաջ, երբ կաթողիկոս ընտրվեցանք, մտածեցինք թե պիտի կրնա՞նք այնտեղ հարմարիլ և դիմանալ ծանր պարտականություններու բեռան տակ: Սակայն այդ տատանումներու և երկյուղներու ժամանակաշրջանը շատ կարճ տևեց, և Մենք այնքան տարվեցանք Մեր մտահոգություններով, Մեր աշխատանքով, այնքան ոգևորվեցանք ապագա ծրագիրներու հեռանկարներով, որ շուտ մոռցանք Ռումանիան և կարճ ժամանակի մեջ այնպես կապված մնացինք մեր սուրբ քարերուն և Հայաստանին, որ հիմա երբեք պիտի չկրնանք բաժնվիլ անոնցմե:

Ուրախությամբ Մենք կմեկնինք ամեն անգամ սուրբ Էջմիածնեն դեպի արտասահման, որովհետև գիտենք, թե պարտականություն մը Մեզ կկանչե: Եվ այդ պարտականության գիտակցությունը Մեզի ուժ, եռանդ կներշընչե, և ոգևորությամբ կուգանք արտասահման, բայց նույնքան ոգևորված և ուրախ կվերադառնանք Հայաստան, Էջմիածին, տանելով Մեզի հետ կենդանության վկայություններ սփյուռքի Մեր պանդուխտ զավակներեն: Մեզի համար մեծագույն հոգեկան մխիթարություն է տեսնել, հաստատել, գրեթե ձեռքով շոշափել մեր ժողովուրդի եկեղեցական բավական լավ կազմակերպված կյանքը և զարգացումը, հոգևոր և մշակութային իմաստներով, սփյուռքի տարածքի վրա: Դուք չեք կրնար երևակայել, թե հայաստանցի ժողովուրդը ինչպե՞ս կսպասե կաթողիկոսի վերադարձին, որպեսզի անոր բերնեն լսե բարի խապրիկներ արտասահմանի հայերեն: Եկեղեցվո բեմեն անսպասման մեկ քանի անգամներ պետք է խոսինք Մենք: Խոստացած ենք:

Մեր ժողովուրդը, ոչ միայն մտավորականները, այլև պարզ մարդիկ հաճախ կդիմեն Մեզի, ընդհանրապես երեք հարցումներով՝

ա) «Ինչքա՞ն հայեր կապրին»: Եվ կուզեն որ մեծ թիվ ըսենք: Մենք ալ քիչ մը կկլորցնենք թիվը, որպեսզի ուրախանան:

բ) «Եկեղեցիներ կա՞ն, քանի՞ եկեղեցիներ»:

Երրորդ հարցումը կըլլա մաթեմատիկ ճշտությամբ՝ «Հայերեն խոսո՞ւմ են»: Այս հարցումը կեդրոնական տեղ կգրավե: Այս հարցումին քիչ մը կդժվարնանք պատասխանել և կըսենք՝ «բավական խոսում են»:

Հայաստանցի հայերը արտասահմանի կյանքեն միշտ դրական ուրախ լուրեր կուզեն ստանալ, տխուր բաներու մասին չեն ուզեր լսել, ոչ ալ ներքին անհասկացողություններու: Անոնք կուզեն, որ արտասահմանի իրենց քույրերը և եղբայրները համերաշխաբար, միասնությամբ ապրին և պահպանեն իրենց ազգային դիմագծությունը, իրենց հայկական ոգին և մայրենի լեզուն: Թույլ տվեք, որ այս անգամ ալ Մեր վերադարձին ձեզմե բարի, ուրախ լուրեր տանինք ձեր եղբայրներուն և քույրերուն ի Հայաստան:

Սիրելիներ, կփափագինք, որ Մեր այս այցելությունը անհետևանք չմնա, չմոռցվի: Նախ դուք Մեզ չմոռնաք, ինչպես Մենք ձեզ պիտի չմոռնանք: Եվ երկրորդ, ինչ որ ավելի կարևոր է, չմոռնաք այն, ինչ որ մեր բոլորի սրտեն և անձնապես Մեր սրտեն բխած բաղձանքն է՝ պահել, պահպանել, եկեղեցական մակարդակի վրա, սուրբ Էջմիածնի օրհնության ներքո, Մարսիլիո, Ֆրանսայի հայության միասնությունը ամբողջապես, անխտիր: Գաղափարական և այլ հարցերու առնչությամբ, հայեր կարող են տարբեր տեսակետներ ունենալ, և ատիկա բնական երևույթ է ամեն տեղ աշխարհի վրա, բայց այդ բոլորեն վեր, այդ բոլորեն ավելի կարևոր, մեր եկեղեցվո ներքին

միության պահպանումն է, այնպես, ինչպես այս եկեղեցին դարեր և դարեր շարունակ կրցած է ապրիլ, գոյատևել և մեր ազգը հավաքել իր շուրջ, բոլորը անխտիր: Այդ իրավիճակը պիտի աշխատինք դուք, մենք, բոլորս արբությամբ պահպանել և հետզհետե ավելի ամրապնդել:

Այս զգացումներով է, որ Մենք երջանիկ եղանք այսօր Բոմոնի եկեղեցին այցելելով և Մեր օրհնությունը տալով բոլորին: Մենք կգովենք Բոմոնցիներն ու անոնց արի վերաբերմունքը, ուղիղ կեցվածքը, և վստահ ենք, որ անոնք օրինակ պիտի դառնան նաև ուրիշներուն, որպեսզի այլ հայրապետական ուղևորության մը առիթով, կամ նույնիսկ առանց սպասելու ատոր, Մենք ստանանք մեր բաժանված զավակներեն նույնպիսի բարի լուրեր: Ահավասիկ այս է Մեր բաղձանքը:

Մեր երկրորդ սպասումն է, որ առավել հետևողականությամբ, առավել նպատակասլացությամբ, առավել եռանդով և գործնական միջոցառումներով կարողանաք կազմակերպել ձեր եկեղեցական, կրթական և մշակութային կյանքը, հատկապես ուշադրություն դարձնելով նոր սերունդին վրա, որովհետև դուք պետք է մտածեք ձեր զավակներուն և ձեր թոռներուն համար: Մենք վերջին կաթողիկոսը չենք հայ եկեղեցվո, Մեր հաջորդներն ալ նույն ուրախությունը պետք է ունենան այստեղ գալով, տեսնելով կենդանի հայություն մը: Մենք շատ լավ կգիտակցինք, որ դժվարին գործ է այդ: Մենք ալ գաղութահայ եղած ենք, Մենք ալ երիտասարդ եղած ենք և անցած ենք բոլոր այն տագնապալի շրջաններեն, որոնցմե հայ երիտասարդը կանցնի արտասահմանի մեջ, հատկապես մտավորական զարգացման ճանապարհի վրա: Մտավորական երիտասարդը արտասահմանի մեջ ավելի դժվար է հայ պահել, ընդհանրապես, որովհետև մշակութային ուժեղ ազդեցություններեն շատ դժվար է խուսափիլ: Արտասահմանի հայ մտավորական երիտասարդները երկու մշակույթի պատկանող մարդիկ պետք է ըլլան: Եվ հնարավոր է ատիկա, երկու մշակույթներու պատկանիլ: Մեր անձնական փորձառությամբ կրնանք վկայել, թե այսպիսի մոտեցում, երկու մշակույթներու պատկանելիություն, նույնիսկ կօգնե մեկ մշակույթը մյուսով արժեվորելու:

Ուրեմն Մենք կոչ կընենք ձեզի բոլորիդ ուշադրություն դարձնել նոր սերունդներու հայեցի դաստիարակության, մոտեցնել զանոնք եկեղեցիին, սնուցանել մեր քրիստոնեական ավանդություններով ու բարոյական արժեքներով և հնարավոր չափով նաև սիրելի ու հարազատ դարձնել անոնց մեր մայրենի քաղցր լեզուն:

Ահավասիկ այն, ինչ որ կկամենայինք ըսել այս պահուն և աղոթել, որ Տերը ձեզ բոլորդ պահե-պահպանե քաջառողջ, հեռու ամեն տեսակ փորձություններե, միշտ օգնական և պահապան մնա ձեզի, ձեր ընտանիքներուն և պարգևե ձեզի հաջողություններ ձեր բոլոր ազնիվ և շինարար աշխատանքներուն մեջ:

Հատկապես պիտի մնանք աղոթող, որպեսզի Մարսիլիոն հայ եկեղեցիները միշտ մնան շեն, պայծառ ու լուսառատ և Աստուծո շնորհները իրենց սեղաններեն բաշխեն ձեզի ամենուդ, ձեր զավակներուն և ձեր զավակներու զավակներուն:

«Ողջ լերուք, զորացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»: Ամեն: